

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք .

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՎԵՐՉԻՆ ԽՈՌՎՈՒԹԵԱՆՅՈՒ ՎՐԱՅ ՎԵՀԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԸՍՍԾ ԽՕՍԲԸ .

Յունուարի 13-ին Փեթրպօլրկի զօրաց Իզմայլովսքի ըսուած գունդը աչքէ անցընելէն յետոյ, Վեհափառ Կայսրը բովը կանչեց այն գնդին սպայքը, եւ հասնեալ այս խօսքերս ըսել անոնց .

«Որովհետեւ հաւանական է որ ձեզմէ շատին յայտնի չեն, պարոններ, Լեհաստանի թագաւորութեան մէջ պատահած վերջին անցքերը, կուզեմ որ դուք Ինձմէ տեղեկանաք անոնց :

«Ջինուորագրութիւնը Վարշաւի մէջ այնչափ յաջող կերպով աւարտուելէն ետքը, որ եղեր էր յունուարի 2-էն 3ը, յունուարի 6-էն սկսան խըռովայոյզ խումբեր երեւնալ Վիսլա գետին երկու ափունքը, եւ իսկոյն զօրքեր յուղարկուեցան գանոնք ցրուելու : Վերջապէս 10-ին գիշերը, որ 11ը պիտի լուսանար, բոլոր Լեհաստանի թագաւորութեան մէջ, բաց ԻՎարշաւէն, յանկարծական յարձակումնք մը եղաւ զօրաց վրայ, որ զանազան զինուորանոցաց մէջ էին, եւ չըսուած չարագործութիւններ իգործ դրուեցան . օրինակի համար, Սեշկից քաղաքին քովերը զինուորները յուսահատաբար սլաշտպանեցին իրենք զիրենք ընդդէմ յարձակողաց՝ մէկ տան մը մէջէն . խռովարարները ուրիշ ձար չգտնելով՝ կրակ տուեր են տանը : եւ սակայն մեր քաջ զինուորները ամէն տեղ յաղթեր են խռովարարներուն :

«Առաջին լուրերուն նայելով, մեր կորուստը 30 մարդ է՝ որ սպանուեր են, որոց մէջը մեր Իզմայլովեան գնդին փառաւոր ընկերը՝ Մաւռոնի հետեւակազօրաց գնդապետ Քոզլեանիկովը : Վի-

րաւորները 100ի չափ են, ընդ որս եւ զօրավարն Քանկապիխ : Նոյնպիսի ապստամբութեան փորձ մը պատահեր է նաեւ Պեշարոսի մօտ՝ Կայսերութեան սահմանին մէջ անգամ :


«Բայց, նաեւ այս նոր չարագործութիւններէն ետքը, ես չեմ ուզեր բոլոր Լեհաց ազգը յանցաւոր համարել . այլ այս ամենայն ցաւալի անցքերուն մէջ կտեսնեմ յեղափոխական կուսակցութեան ջանքը, որ ամէն տեղ կաշխատի օրինաւոր կարգերը տակնուվրայ ընել :

«Ինձի յայտնի է որ այս կուսակցութեան մէկ յոյսն ալ այն է որ մեր զօրաց մէջ դաւաճաններ գանէ . բայց չիրնար խախտել այն վստահութիւնը զոր ունիմ ես իմ հաւատարիմ ու փառաւոր զօրացս իրենց պարտքը ձիշդ կատարելուն վրայ :

«Հաստատ գիտեմ ես՝ թէ այժմ ուրիշ ամէն ժամանակէ ալ աւելի ձեզմէ ամէն մէկը իրեն երդման սրբութիւնը հասկընալով, իւր պարտքը կկատարէ, ինչպէս որ մեր դըրօշակին պատիւը զայն կպահանջէ : ես ինքս ձեր կարգին մէջ սկսեր եմ իմ զինուորական ծառայութիւնս . յետոյ քանի մի տարի ձեզի հրամանատար լինելու պատիւը ունեցեր եմ . ուստի ձեր հաւատարմութիւնը Ինձի լաւ յայտնի էր, եւ ես անով պարծեցեր եմ ձեզի համար առաջի հանգուցեալ թագաւորին Մնոզին իմոյ :

«Ես լաւ գիտեմ որ եթէ հարկը պահանջէ, դուք այժմ եւս գործով կցուցընէք թէ ես կրնամ իձեզ վստահանալ, եւ դուք իմ կատարեալ վըստահութիւնս կարդարացընէք » :

Վեհափառ Ինքնակալին այս խօսքին վրայ ամէնքը մէկ բերան կեցցեց կանչելով օդը հնչեցուցին :



ՓԵՏՐՈՒՄԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆՆԼՈՒԿԻՆ ԼՈՒՄՈՒՄԸ .

Ա. Տիրսկու անունով յոյն բանաստեղծը, որ Քրիստոսէ 680 տարի առաջ էր, կալ ու միականի էր կըսեն : Երբ Սպարտայիք Աթենացւոցմէ զօրավար մը ինդրեցին Մեսսենիացւոց պատերազմին ատենը, Աթենացիք ծաղրածութեան համար Տիրսէսոր զրկեցին . բայց շուտ իմացուեցաւ որ նա մեծ բանաստեղծ ու քաջամարտիկ պատերազմող է, եւ

Սպարտայի երկդառակութիւնը վերուց իւր ճարտասանութեամբը :

Բ. Աննիրազ Կարբեդանացւոց զօրավարը, որ հարիւր հազար զօրքով Ախրիկէէն Իտալիա անցաւ՝ Քրիստոսէ 200 տարի առաջ, ու երեսունըվեց հազարով Հռոմի վրայ քալեց, միականի էր :

Գ. Մեծին Աղեքսանդրի հայրը Փիլիպպոս Մակեդոնացին միականի էր կըսեն .

